

եկեղեցու հետ աճել է և իւր դերը կատարել, Պէտք է ստել, որ նա արդէն իւր կոչումը լրացրել է, սնուցանելով ամենանախարհական բարիքներ, և որ յունական եկեղեցին այսօր նրան է պարտական, այն ամէնը ինչ որ գեռ կենդանի է իւր մէջ*:

Թ.

ՕՏԱՐ Ե ԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈԴՈՔՍ Ե ԿԵՂԵՑԻ.

Церк. Вѣстникъ թերթը մի ընդարձակ յօդուածով նկարագրում է, թէ ինչ վիճակի մէջ է եղել Օրթօդոքս արևելքն անցեալ տարին: «Պոլսոյ Տիեզ. պատրիարքութեան զլիսու որ հոգսերից մէկն էր Պրեմէ կղզու բրիտանական ազգաբնակիւթեան ծանր վիճակը, որտեղ եկեղեցական կեանքը երկարատե խռովութիւնների շնորհիւ բոլորովին ընկել և եկեղեցւոյ հովիւները ցրուել էին. տարուայ վերջինս երբ յունաց արքայորդի Պէորդին կղզու կառավարիչ նշանակուելով քաղաքական դրութիւնը բարեփոխուեցաւ և խաղաղութիւն հաստատուեցաւ երկրի մէջ՝ կարելի եղաւ նաև եկեղեցւոյ բարեկարգութեան մասին մտածել. եպիսկոպոսներն ու միւս հոգևորականներն իրենց տեղերը վերադարձան, խանդարուած և աւերակ դարձած եկեղեցիներն ու վանքերը վերանորոգել սկսան, դպրոցներ բացին և ինչ: Հարկաւ հարկերը դեռ շատ մեծ է և տարիներ շարժառայ է հարկաւոր մինչև գոնէ արտաքին բարեդարութիւնը վերականգնել, բայց ներկայ տարահով դրութեան մէջ այլ ևս դժուարութիւններ չեն մտնում դորա համար:

— Առտանդին Յ. Պատրիարքը իւր հօտի հովուութեան նկատմամբ այն կողմից նպաստաւոր հանգամանքներ է մէջ էր, որ չէզոք դերը բռնած լինելով յոյն-տաճկական պատերազմի ժամանակ, վայելում էր սուլթանի վստահութիւնը և կարող էր իւր խնդիրներին յաջող ընթացք առն տաճիկ կառավարութեան առաջ: Նորա և իւր սինոզի մի քանի կարգադրութիւնները մանաւանդ կարևոր են եկեղեցական բարեկարգութեան տեսակէտից, այսպէս՝ պատկազրութեան համար հրամայուած է, որ ամէն ջանք դործ գնեն այդ խորհուրդի որրութիւնը բարձրացնելու ժողովրդի աչքում և զգուշաւոր լինեն մանաւանդ օտար

բահպատակների պատկելիս. ծխական հոգևորականութեան համար խառն արգելուած է քահանայ կամ տարկաւագ ձեռնադրել, առանց որոշ ծուխի հետ կապելու՝ ձեռնադրել քահանայ 30 տարեկանից և սարկաւագ 25 տարեկանից ցած. ծխականներին արգելուում է առանց թեմական առաջնորդի դիտութեան կղերականներ ընտրել. առաջնորդներին պատու իրուում է բոլոր քահանաների և սարկաւագների ցուցակը պատրիարքարան ուղարկել, նոցա վարք ու բարքի վերայ հսկել, թող չտալ որ առանց առաջնորդին յայտնելու տեղից տեղ գնան և ինչ: Նոր կարգադրութիւններ չեն սորա ի հարկէ, բայց ցոյց են տալիս թէ ինչ քաների համար զլիսու որուպէս և ինչ կերպ հոգ է առնում պատրիարքարանը: — Բարկանեան թերթկղզու փոքր սլաւոն ազգութիւններին հետ ունեցած վէճին զայնով պատրիարքարանը ստիպուած եղաւ կրկին նոր զեջում անել սերբերին նորանով, որ Սլոպե թեմի առաջնորդ նշանակուեցաւ մի սերբ վարդապետ: Իսկ Բուդապեների հետ թէպէտ մի ժամանակ լուր տարածուեցաւ թէ հաշտութիւն կայացնելու մտադրութիւն կայ, բայց ինքը Բուդապեների Կեղարքը հերքեց այդ լուրը: Արագիւնների գրելով նա անել է. «Եթէ յունաց պատրիարքութիւնը իւր մեղքերը ձանձաչել է, թող վերջ տայ հերձուածին. Բուդապեական եկեղեցին ո՛չ մի զեջում և ո՛չ մի դժոգութիւն չի անել, որ ազգային շահերը դէմ լինէր. գոնէ ես քանի այս եկեղեցու գլուխն եմ այդպիսի բան թող չեմ տայ: Ես ամենից առաջ Բուդար եմ և նուիրել եմ ինձ Բուդապեական եկեղեցուն և Բուդար ժողովրդին»: Պոլսում Բուդարաց նոր եկեղեցու հանդիսաւոր օծումը աւելի ոյժ տուաւ հակառակութեան: — Բոսնիայ և Հերցեգովինայ օրթօդոքսները կողմից պատգամաւորութիւնը գոնեւելով պատրիարքարանը փոքր ձեց նոցա ներքին գործերի մէջ խառնուել, բայց ինչպէս երևում է Բ. դրան ճնշման ներքոյ այդ միջամտութիւնը հետևանք չունեցաւ: — Առտանձին ու շաղրութեան արժանի մի դէպք էր նաև Սալոբուրեի Արքայորդ կեպիսկոպոսի պատրիարքին այցելելը, թէպէտ այդ այցելութեան արդեւնքը յայտնի չէ, բայց այն հանգամանքը, որ նա անել է ունեցել 194 անդլիական եպիսկոպոսների ժողովական լիճաւ և օրթօդոքս եկեղեցւոյ հետ յարաբերութիւն հաստատելու նրպատակով՝ ինքն ըստ ինքեան կարևոր երևոյթ է:

Անտիոքի և Նրուսադէմի պատրիարքութիւնները զբաղուած են շարունակ ներքին դժուարութիւններով և կաթոլիկ ու բողոքական միաբնակարանների դէմ մաքաւելով, որոնք կամայ կամայ խլում են նոցանից իրենց հօտը: Ներքին դժուարութեանց զլիսաւոր պատճառ լինում է յոյն և ա-

* Կարևոր ամսակարգի մի քանի տղերքերակի փոփոխել և կրճատել: իմր

տրի տարբերի մշտական հակառակութիւնը: 1897 թ. վերջին Անտիքի Սպիրիդոն պատրիարքը եօթ անգամի մեարապոլիաների ժողովով ակտիւնը զրկուել էր և անգը նշանակուել Մարաց մեարապոլիա ներմանին, որին և Բ. Գուռը ճանաչեց. բայց մեարապոլիաների մի ուրիշ ժողով Աւաղակիայ Մեղեհիոս մեարապոլիան ընտրեց, որին Բ. Գուռը չի ճանաչել, և այսպէս մեծամասնակ Յ պատրիարքներ են հանգէս եկել, որոնցից իւրաքանչիւրը իւր կողմնակիցներն ունի և հակառակութեան պատճառ է:—Ներքուստ աւելի խաղաղ վիճակի մէջ է Աղեքսանդրիայ եկեղեցին, որի դաւամեայ Սոփրոնիոս պատրիարքը, շարունակում է արթնութեամբ հսկել իւր հօտի վերայ, բայց օտար եկեղեցիներին առաքելութեան կողմից վտանգն այստեղ աւելի մեծ է. Ատանաթէս կաթողիկոսներ թիւը Նդիպատում 57,420 է, չհաշուած 20,000 Ղպաի և 17,410 այլ ձէների կաթողիկոսներն. Աղեքսանդրիայում նստում է պապի կողմից մի «առաքելական փոխանորդ», որի իշխանութեան ներքոյ կան 42 առաքելութեան կենդրոններ, 64 եկեղեցիներ, 94 քահանաներով և 81 դպրոցներ: Հռոմէական եկեղեցւոյ ազդեցութիւնը տարածում է նաև Հարէշրտաանում, ուր նոյնպէս առանձին «առաքելական փոխանորդութիւն» է հաստատուած և ունի իւր հսկողութեան ներքոյ մի դպրանոց, 10 դպրոցներ, մի օրբանոց երկսեռ մանուկները համարիակ եթովպական ձէս պահպանող կաթողիկոսների թիւն է մօտ 30,000.

—Արեւելքում կան նաև երկու անկախ արքեպիսկոպոսութիւններ՝ Պէպրոսում և Սինա լեռան վերան, բայց նոցա միակերպ ներքին կեանքից կարևոր բան յայտնի չէ:

—Հելլենական եկեղեցին դժբախդ պատերազմից յետոյ ուրիշ խնդիրներին հետ՝ այն գլխաւոր խրատը պէտք է հանէր, թէ ձախողութիւններին մէջ զիմանալու համար մի ժողովուրդ բարոյական մեծ ոյժ պէտք է ունենայ, որ շատ կողմերով պահպանում էր հելլէն ժողովրդին: Աստի սինոդը իւր արժանաւոր նախադաս Պրոփուլի մեարապոլիտի հետ առանձին ու շք դարձրին ժողովուրդի կրթութեան և բարոյական դաստիարակութեան վերայ և մեծ ջանք դարձրին կառավարութեան համակրու, որ օրէնքներով և վարչական կարգադրութիւններով նպաստէ այս դորձին: Այսպէս յաջողուեցաւ համաձայնութիւն ստանալ, որ համարտարանի աստատածարանական բաժնում 4 ամբիոններ լինեայ աւելումն նաև Յ թափուր մնացած ամբիոններ, աւելի կրօնական կրթական մասնաւոր ընկերութիւնների օգնութեամբ քաջալիբուեցաւ քարոզչութեան գործը, թէպէտ օրինական ճանապարհով յաակապէս քա-

րոզչութեան համար նշանակուած հոգևորականների վիճակը բարելաւելու ծրարելը ղեռ գործադրութիւն չի գտել, նոր օրինադրութեան մէջ կարևոր սեղ դրուեցաւ հոգևոր դպրոցների բարւոյման խնդրին վեցամեայ ստորին և քառամեայ մասնաւոր դասընթաց ունեցող այդ դպրոցների և այդ սեղ աւանդում ուսումը պարտաւորեցուցել պէտք է լինի ապագայում բոլոր ծխական հովիւներին համար: Պրոփուլի մեարապոլիտը հոգ տանելով առանձնապէս նաև վանականութեան բարոյական վիճակի մասին՝ մի շքաբերականով պատուրիւր է որ կենդրոնական վարչութեան վիճակադրական տեղեկութիւններ տրուին բոլոր վանքերից: Այլ և նորա առաջարկութեամբ Աթէնքի բարոյական վարչութիւնը հրամայել է բոլոր խանութներն ու արհեստանոցները փակել կիրակի և տօն օրերին մինչև պատարագի վերջնաւր լակ օղէաները բոլորովին փակել մեծ տօներին:

—Ռումինիոյ թագաւորութեան օրթոդոքս եկեղեցու համար ամենից կարևոր դէպքն էր թագաւորի այցելութիւն գալը Ռուսաստան, որի առիթ եղաւ սերտ բարեկամական կապեր հաստատելու հարևան դաւանակից հզօր պետութեան հետ և այդպիսով զօրացնելու օրթոդոքս եկեղեցու վարչութեան ձայնը տեղական կառավարութեան առաջ: Կարևոր է նաև նոր հրատարակուած այն օրէնքը, որի զօրութեամբ այսօրհետև միջնակարգ դպրոցների բոլոր դասարաններում կրօնի դասատուները կրթութիւն պէտք է լինի մինչև ղեռ առաջ միայն չորս նախապատրաստական դասարաններում էր, նոր օրէնքը պահանջում է նոյնպէս, որ միջնակարգ դպրոցներում կրօնի դասատուները բարձրագոյն կրթութիւն ստացած լինեն, ուստի և այդպիսիների թիւն աւելացնելու համար բացում է երկրորդ աստատածարանական բաժին Նաչի համալսարանում (առաջինը Բուրբեշտի համալսարանում է 1881 թ. ից ի վեր): Պէտք է նկատել որ բումինական օրինաց համաձայն բոլոր եպիսկոպոսներն ու քաղաքում ծառայող քահանաներն ու սարկաւաղները նոյնպէս բարձր կրթութիւն պէտք է ունենան և «լիցէնցիա»-ի աստիճան ստացած լինին: Նոր օրէնքը արդելում է նաև քանդել ու նորոգել հին պատմական նշանակութիւն ունեցող եկեղեցիներն ու վանքերը, առանց կենդրոնական եկեղեցական իշխանութեան և հնազանդական մասնաժողովի գէտութեան, լինչպէս և սամարները զարգարել նկարներով, առանց թոյլտուութեան հոգևոր իշխանութեան:

Բուլղարական եկեղեցին, որ բացի բուն բուլղարական իշխանութիւնից (11 թեմերի բաժանում) իւր մէջ առնում է նաև Թրակիայում և Մակեդոնիայում ապրող բուլղարներին (թեմերի

Թիւր վերջին տարին 8-ի հասցրած՝ միայն Տիեզրաբարեկարգութեան ներկայացուցիչներն շնորհիւ գրեթէ ամեն անգամ յաջողութեամբ յառաջ է ասանում իւր դատը:— Բնչպէս Բուսանիոյ՝ այնպէս և առաւել բուրգարական օրթոդոքս եկեղեցւոյ համար մեծ նշանակութիւն ունէր Ֆերդինանդ իշխանի այցելութեան զայր Ռուսաց մեծադօր Կայսեր, իշխանուհու և օրթոդոքս մկրտած Բորիս Թագաժառանգի հետ:— Ներքին բարեկարգութեան նկատմամբ բոլորարական սինոզն ևս առանձին ուշադրութիւն է դարձնում հոգեւոր կրթութեան վերայ, որ բաւական յետ է մնացել այստեղ, ինչամբ է ասանում մանաւանդ երկու հոգեւոր դպրոցների մասին, որոնցից մէկը Կ. Պոլսում է, Էկզարխի հսկողութեան ներքոյ, միւսը Սամսոկոյում: Սինոզը կամենում էր վերջինս Սոֆիա մայրաքաղաքը տեղափոխել, բայց ազգ. ժողովն ընդդիմացաւ: Զամբ է լինում նաև կրօնաւորների կրթութեան ատենանք բարձրացնել և այս նպատակով սկսել են դպրոցներ բանալ վանքերի մօտ: Այս Զանքերի մէջ եռանդուն մասնակցութիւն ունէր սինոզի նախագահ Գրեգորի մետրապոլիտը, որ վախճանուեցաւ անցեալ թուի գեկտ. 16-ին, փոխարէնը ժամանակաւոր նախագահ է նշանակուած Սամսոկի մետրապոլիտ Գոդիթեան:

Սերբիական եկեղեցին կորցրեց իւր զլուխ Միքայէլ մետրապոլիտին, բայց մեծ գովութեամբ են խօսում նորա յաջորդ Բնակինաչի մետրապոլիտի մասին, որ ուստական կրթութիւն է բուսացել (Պիեյի հոգեւոր ձեմարանն աւարտել) և դեռ իւր սովորական քահանայ եղած միջոցին եռանդուն մասնակցութիւն ունեցել պետական գործերի մէջ այժմեան թագաւորի խոստովանահայրը լինելով և նոյն իսկ լուսաւորութեան ու եկեղեցական գործերի նախորդութեան օգնականի պաշտօն վարելով, ուստի յաջողութեամբ պաշտպան է հանդիսանում սլաւոնական շահերին այժմեան կառավարութեան առաջ, որի վերայ ազդեցութիւն է ձեռք բերել կրկին նախկին թագաւոր և թագաւորահայր զէպի արեմուսք հակուդ և հակաուստական քաղաքականութեան պաշտպան Միլանը:

Նոր Մանրապոլտի յաջողութիւններից մէկը համարուում է այն, որ կարողացել է հաշտեցնել իւր նախորդի ժամանակ յառաջ եկած երկու եկեղեցական կռուակցութիւնները, թեմեր տալով այն անպաշտօն կաթոլիկոսներին, որոնք հակաթու մետրապոլիտի ձեռնադրած լինելով՝ երկար տարիներ հեռացած էին գործից և իբրև կաթոլիկոս չէին ճանաչուում:—

Սերբիայում ևս անցեալ տարի նոր օրէնք հրատարակուեցաւ «Ոստուածարանութիւն» կո-

չուած Բեղլըբազի մեակ հոգեւոր դպրոցի մասին, որով ուսանողների թիւը զգալի կերպով աւելանում է և կարեւոր փոփոխութիւններ են մտնում ուսուցչական կազմի մէջ:

Հարեան ցեղակից Չերնադորեան շարունակում էր նաև եկեղեցական տեսակէտից իւր խաղաղ և ապահով կեանքը՝ Ֆերդինանդ իշխանի այցելութեամբ աւելի ևս ամրացնելով բարեկամական կապերը դաւանակից Բոլղարիայի, ինչպէս և հոգր Ռուսաստանի հետ: Մամուլի մէջ երբեմն երբեմն լոյս ընկնող այն լուրը, թէ կաթոլիկական պրոպագանդան յաջողութիւն ունի այստեղ, հերքել է լուսաւորութեան եկեղեցական գործերի պաշտօնական թերթերը, որ յայտնում է ընդհակառակն, թէ վերջին տարիները խառնամուսնութիւնների միջոցաւ և ազատ կերպով մի քանի տասնեակ կաթոլիկներ օրթոդոքս դաւանութիւն են ընդունել այստեղ:

Գալով վերջապէս Աւստրիոյ հպատակ օրթոդոքս եկեղեցիներին պէտք է նկատել, որ քանի պետութիւնը ահազին երկպառակութեան մէջ է գերմանական սլաւոնական, հունդարական ազգութիւնների փոխադարձ կռիւների շնորհիւ, բնականաբար այդ կռիւներն ազդեցութիւն են ունենում և ցեղական ու դաւանական հակառակութիւնը կենդանի պահում ասրբեր եկեղեցիների մէջ:

Այսպէս Բուկովինիոյ և Գաղմասիայի անկախ արքեպիսկոպոսական եկեղեցին, որի առաջին մասի բնակիչները խառն ուսմիներ և ուսմիներ են, իսկ երկրորդներ սերբիական ծագումն ունեն, մի կողմից շարունակ կաթոլիկութեան դէմ մտաբան մէջ է, միւս կողմից մասնաւորապէս Բուկովինիայում ուսմին տարբը ձգտելով իշխել ուստականի վերայ, վերջնոյս դժգոհութիւնն է գրգռում: Այստեղ մեծ յաջողութիւն ունին եղուիա քարոզիչները, և Բուկովինիայի օրթոդոքս եկեղեցին, որ բաւականաչափ ոյժ և կրթութեամբ եռանդուն հոգեւորականութիւն չունի նոցա գիմազիլու համար՝ մեծ վտանգի մէջ է համարուած: Իսկ ուսմին տարբի գերակշռութիւնը ուստականի նկատմամբ բացատրվում է նորանով, որ եկեղեցական բարձրագոյն վարչութիւն կազմող կոնսիստորիային գրեթէ բոլոր անդամները ուսմիներ են: Չերվոնկեցի համալորարանի ստատուածքանական բաժնի բոլոր աւարիաններն ևս բացի երկուսից, ուսմին բնչուով են դատախօսուում: Այս պատճառաւ մօտ ժամանակներս պետական ժողովի երկու ուսմին ներկայացուցիչները պահանջ են գրել՝ ականսխատարիան երկու մասի բաժանել՝ ուսմիական և ուստական, որոնք ընդհանուր գործերը միասին կկարգադրեն, իսկ այս կամ այն ազգու-

թեան վերաբերեալներն առանձին. բ) Չերվոնեցի և Բազովիցի եպիսկոպոսներն փոխէփոխ մէկ ուսմին ցեղից նշանակուին մէկ ուսմին: Աւերջին առաջարկութիւնն անցեալ տարի իրականացել է մասամբ նորանով, որ Բազովիցի եպիսկոպոս է նշանակուել զիսնական Ալադիմիր Գէ-Քէպտա վարդապետը ազգով ուսմին:

— Միակ իտիպակտ ուրախառիթ դէպքը այս եկեղեցւոյ համար եղել է անցեալ տարի այն, որ սեպտ. 19 նոր օրէնքով ինչպէս կաթողիկէ, այնպէս օրթոդոքս հոգևորականների ուսմիններն աւելացրել են և դորանով նոցա վիճակի բարւոքմանը մեծապէս նպաստել:

Աւստրիական պետութեան միւս կէտի Աւնդարական բաժնի մէջ Կարլովիցի անկախ պատրիարքութիւնը կայ, որի սերբ ժողովուրդը աւելի ևս ենթակայ է ներքին կուսակցական կռիւնների: Կրօնական տեսակէտից այստեղ վատնոյն այնքան օտար բարդիչներ կողմից չէ, որչափ նոյն իսկ իրենց սերբերի մէջ ծագած մի առասկ բողոքական շարժման կողմից, որ «նազարակահաւթիւն» է կոչուում: Ընդհակառակն մօտ 1000 հոգի հասակաւոր կաթողիկէներ իրենց երեխաներով օրթոդոքս դասանութիւն են ընդունել այստեղ:

— Մի երբորդ անկախ օրթոդոքս եկեղեցի է Աւնդարիայում Հերմանշտադտի բումինական մետրապոլիտութիւնը, որ աւելի յաճող կերպով մարտում է մաջարների ոսնձութեանց դէմ, բայց այստեղ ևս կաթողիկէ եկեղեցւոյ հետ միացած բումինների յաճախ երկպառակութեան պատճառ են լինում:— Ինչ վերաբերում է Բոսնիոյ և Հերցեգովինիոյ անուանական կերպով Տիւնգ. պատրիարքի իշխանութեան ներքոյ գտնուող օրթոդոքսներին՝ նոցա կողմից անվերջ գանդատներ են լինում կառավարութեան անհանկի ճնշմանց և կաթողիկէական պրոպագանդայի դէմ, բայց ո՛չ գեռ տեղական եկեղեցւոյ վարչութիւնը առանձին եռանդ է ցոյց տուել և ո՛չ զրոյց լուրջ միջոցներ են ձեռք առնուել այդ գանդատներին վերջ տալու: Յիշեցինք որ նոցա բողոքը Տիւնգ. Պատրիարքին անհետեանք մ'նաց. լուրեր են տարածում՝ իբր վերջինս 500,000 գուլդէն կաշառք է ստացել Աւստրիական կառավարութիւնից գորա համար:

Ռուսաց եկեղեցւոյ նկատմամբ մենք մի ընդհանուր ակնարկ յառաջ էինք բերել արդէն անցեալ թուականի վերջին համարում: Կիշենք այստեղ միայն, ուր Պալլապիլ մետրոպոլիտի վախճանը նորանոր տեղախոսութիւնների առիթ տուաւ: Ռուսաց հոգևոր վարչութեան մէջ: Մետրոպոլիտ նշանակուած Սրբ. Անտոնիլի տեղ Ֆինլանդիոյ արքեպիսկոպոս կարգուեցաւ Սարատովի եպիսկո-

պոս Սրբ. Նիկողայ. նորա աթոռը յանձնուեցաւ Պետերբուրգի հոգևոր ճեմարանի տեսուչ և Նարվի եպիսկոպոս Սրբ. Իօաննին. տեսուչ նշանակուեցաւ սորա փոխարէն Կ. Պալտոյ Ռուսաց դեպանատան եկեղեցւոյ հովիւ Բորիս վարդապետը և ինչ այլ և Ալէուտիայի նշանաւոր Նիկողայ եպիսկոպոսը Տարիկեան նահանգը փոխադրուեցաւ. եպիս. ձեռնադրութիւն և տեղափոխութիւններ եղան Սերբիայում: Կադանի արքեպիսկոպոսական թեմի վերայ մի փոխանորդութիւն աւելացաւ և ինչ: Ի միջի այլոց Մոսկուայի Հոգևոր ճեմարանը որ վերջին ժամանակներս միշտ վարդապետ տեսուչներով էր կառավարուում՝ բախտ ունեցաւ եպիսկոպոս ձեռնադրուած տեսնել իր այժմեան տեսուչ Արսէնի վարդապետին, որ ստանում է Վոլոկալումի թեմը՝ պահելով միանգամայն նախկին պաշտօնը:— Առանձնապէս յիշել պէտք է նաև Ամենոզոմած Պայսեր առաստուէրը, որ բարեհաճել է մի միլիոն բուրլի շնորհել «Արմիլի խաչի» ընկերութեան միջոցաւ յօգուտ վառ հունձի պատճառով վնասուած նահանգների սովեալ ժողովրդեան:— Արտատահմանում Ռուսաց եկեղեցին երկու աչքի ընկնող հանդէսներ ունեցաւ վերջինս, զեկտեմբեր 6-ին մի եկեղեցու հիմք դրուեցաւ հեռու հարաւային Ամերիկայում Արգենտինեան հասարակապետութեան Բուէնոս—այրէս մայրաքաղաքի մէջ, և ապրիլ 6-ին մեծ շօքով օծուեցաւ Վիեննայում կառուցած նոր փառաւոր տաճարը: Աւերջին հանգէտը կատարելու համար Վիեննա էր ուղարկուած Վարչապի Իերնիմ արքեպիսկոպոսը և ներկայ էին բազմաթիւ ուսու և օտար բարձրաստիճան անձինք ու պատգամաւորութիւններ:— Տիեզերական ժողովի արևցորեան, արևեկարտերի դեմ մտախմբ և այլ նման հարցեր շարունակում են արժարծուել մամուլի մէջ և հասարակաց կարծիքը զբաղեցնել. բայց դոցա մասին խօսելը կմնայ մի ուրիշ անդամի:

ԿԵԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻ

Chronik d. Chr. Welt թերթը մի ընդհանուր ակնարկ է ձգում Հռոմէական եկեղեցւոյ յունուար—մարտ ամիսներում ներկայացրած վիճակի վերայ, որից քաղում ենք հետեւեալը:

Պապի առողջութիւնն բաւական ժամանակ զբաղեցրեց աշխարհին, շատ խօսուեցաւ ապագայ Պապի և նորա բռնելիք քաղաքականութեան մասին և այդ առթիւ հետաքրքրական խորհրդածութիւնների աւարկայ եղաւ այն կէտը, թէ ինչ դերք ունի այժմ պապականութիւնը այլ և այլ մեծ երկրներում: Զարմանալի է որ, ինչպէս բոլոր երեւոյթները վկայում են, պապի հեղինակութիւնն այժմ ամէնից աւելի զօրեղ է բողոքական

գերելիանոյ թեան ներքոյ գտնուած երկրներում՝ Գերմանիայում և Անգղիայում: Գերմ. պետական ժողովի մէջ իւրաքանչիւր հուսակցութեան գըլխաւոր ջանքն է կարծես զօրաւոր կաթոլիկ կեդրոնի հաճութիւնը ձեռք բերել, իսկ կառավարութիւնը երբեմն մինչև իսկ անպատուարեք զիջումներ է անում: քաջաշէրտ է կաթոլիկական ամենաձայրացեղ ձգտումներ: միայն թէ կարողանայ օգուտ քաղել այդ հաճութիւնից իւր քաղաքական նպատակները յառաջ տանելուն համար: Վաթոլիկներն տարիներէ ի վեր պաշտպանած դասը՝ Յիսուսեան կարգի դէմ եղած օրէնքը վերացնել և իրաւունք ստանալ, որ նա ազատ մեռաք դործէ Գերմանիա, ինչպէս երևում է շուտով յաղթանակ կտանէ, և առհասարակ կաթոլիկներն այնպէս յաջողոյ թիւններ են ունենում: որ կարելի էր մտածել՝ թէ լշտող դու անո թիւնն այստեղ կաթոլիկա թիւնն է, և ո՛չ բողոքականութիւնը: Արտֆ. Հէլլի գառապարտութիւնը պարզ ազատցոց էր, թէ պրագական վարչութիւնը կարող է գեւ ըսնանալ ըստ հաճոյից, և այնուամենայնիւ կաթոլիկ գերմանացիները Հռոմից եկած պատգամներն իրրե սրբութիւն կրնդունեն և կգաշտպանեն անելի բողոքականութեան դէմ:

Անգլիայում հռոմէական ազդեցութեան աչքի ընկնող նշանն է այն, որ մի զօրեղ կուսակցութիւն աշխատում է անգլիկան եկեղեցւոյ անդամներին վարժեցնել կաթոլիկական կարգերի և սովորութիւններին և սորա շատ աւելի մօտ են դրում իրենց և յարգանքով են վերաբերում մ հռոմէական եկեղեցւուն քան բողոքականներին: Թէպէտ մինչև այժմ Հռոմին զիջումներ անել տալու և այդպիսով յարաբերութիւն հաստատելու վարժերը դուր են անցել, բայց կատիւածելի է՝ արդեօք անգլիկաններն այս կուսակցութիւնը հեազհեաէ այնչափ չի մօտենայ, որ բոլորովին յարի կաթոլիկութեան:

Վաթոլիկական երկրներում հռոմէական եկեղեցւոյ դրութիւնը բոլորովին ուրիշ է: Սպանիայում թէպէտ պապական ազդեցութիւնն ունիվիճելի է գեւ և ու ինչպէս նկատել ենք այժմեան կառավարութիւնը կղերական ուղղութեան է հետևում ամբողջապէս: բայց հեազհեաէ բողոքող ձայնները շտանում են սրնք Սպանիայի յետադիմութեան և բոլոր դժբաղդութեանց պատճառը կղերականներն են համարում: Հարկաւ պապական իշխանութեան հոգը չեն ամենին այդպիսի բողոքները, սակայն ակնիբև է որ Սպանիան զգալի կերպով տկարանում է և նորա կալուածները օտարների ձեռքն են անցնում: սրով և նորանոր երկրներ կենում են հռոմէական ազդեցութեան տակից. — Հարաւարին Ամերիկայում մի ժամանակ սպանացիների հիմնած գողթականութիւնները, ինչպէս նկատել ենք, թէ կաթոլիկական և թէ քաղաքական տեսակէտից շատ կատիւածելի դրութեան մէջ են այժմ: Թէ ժողովրդի և թէ մտնաւանդ հոգեւորականութեան բարոյական կարգը քաջացաւում է, և եթէ մօտիկ ապագայում օտար անբարեկամները հաստատուն երկրի մէջ՝ կաթոլիկութիւն կկորցնէ անշուշտ օտքի տակի հոգը:

Բուն Իտալիայում յերաւել հասարակ բարեպաշտ ժողովուրդը գեւ հաւատարիմ է մնացել եկեղեցւուն, բայց սակաւ զօրեղ չեն այդ ժողովրդի մէջ հայրենասիրական զգացումները, այնպէս որ եթէ մի օր ընդհարումն զգացուի եկեղեցականի և ազգայինի մէջ, ամենայն հաւանականութեամբ գերակշռութիւնը կըլին վերջնոյս կողմը կլինի: Անիշխանական և յեղափոխական գաղափարների զօրանալը նայնպէս ոչինչ լաւ ապագայ չէ խոստանում պապականութեան: Ենթադրելով իսկ, թէ երկրի այժմեան անտեսական տաղանայն շնորհիւ զայրոյթն այնչափ մեծանայ, որ պրագական իշխանութիւնը կարողանայ ընդհանուր դժգոհութիւնից օգտուելով թագաւորութիւնը կործանել և նորա տեղը ըսնել, այնուամենայնիւ նորա համար այնպիսի նոր գժուարութիւններ կծագեն, յեղափոխական տարրերի դէմ կուռեն այնչափ ծանր կլինի նորա համար, որ նա շատ աւելի անուպահով վիճակի մէջ կընկնի քան այժմ, և ոչ մի հնար չի ունենայ երազած աշխարհական իշխանութիւնը հաստատել: Մնում է ուրեմն հաշտութիւն կայացնել թագաւորի հետ: բայց այդտեղ ևս հարց է՝ արդեօք այն դէպքում իսկ երբ յաջողի մի պապ նստեցնել, որ այդ քայլն անելու տրամադրութիւն ցոյց տուող լինի կկարողանայ նա իւր ցանկութիւն իրազործել հակառակ հայտը ու մի տեսակ խոչընդոտների և կուսակցական ինդիվիդներին:

Գրանսիայում յայտնի է թէ ինչ անագին շարժում ձգեց վերջին տարիներս Գրանսիայի դասը: Այս դասի մէջ դուրս կրօնական խնդիր չկայ ի հարկէ, բայց որովհետև կղերական տարրը եւ անդուն մտնակցութիւն է ցոյց տուել յօգուտ Գրաբիստի հակառակորդներին ու սակ պաշտպանները սրնց մէջ բուական թուով բողոքականներ կան, խիստ հակակղերական ուղղութիւն են ըսնել և այդտեղ բարգուծութիւններ կարող են ծագել հռոմէական եկեղեցւոյ համար: Վաթոլիկ մի խումբ բաժնանների ազատական շարժման մասին մի բանի անդամ խօսել ենք. այս շարժումն արդէն զատ կրնական է, մինչև այժմ գերծ է մնացել արտարին խորթ ազդեցութիւնից և արդեօք լինելով ազգային հոգի վերայ ունենալով խոհարան և աւարտուն կաթոլիկ եկեղեցւոյ


ներքին կեանքին և ամբողջ դրութեան քաջ ծա-
նօթ ներկայացուցիչներ՝ յաջող ապագայ է խոս-
տանում:

Աւստրիայում ընդհանուր կենդանի հեա-
քբքբութեան առարկայ է դեռ՝ «Յ բաց Հոռ-
մից» նշանաբանով սիրուած շարժումը: Սպաս-
ուում էր, որ մի քանի յաջողները միահամուռ
գործով կարելի կլինի զօրեղ ապաւորութիւն
գործել և ընդարձակ ծաւալ տալ գործին: Բայց
չյաջողեցաւ և ինչպէս երևում է չի էլ յաջողի:
Թէպէտ բողոքական Գերմանեայի կողմից ամէն
կերպ ազդակիցներին խրախուսելու ջանքերը բազ-
մապատկուում են, սր նորա թօթախին Հոռմի
լուծը, բայց միւս կողմից զօրանում են նաև դա-
ւանափոխները լրջութեան դէմ եղած կասկած-
ները: և հաւանականաբար բողոքական եկեղեցին
մեծ վաստակ չի ունենայ այստեղ: Այնուամե-
նայնիս վաստակ մեծ է և մնասոր զգալի Հոռմի
համար, ուստի կաթոլիկ կղերականութիւնը սաս-
տիկ իրարանցման մէջ է և շրաւականանալով
մտմուրի քարոզի եկեղեցական այլևայլ ձեանար-
կութիւնները միջոցաւ իւր դատը պաշտպանելու,
ամէն ջանք գործ է դնում կառավարութեանն
ստիպելու որ ոստիկանական միջոցներ ձեռք
առնէ դաւանափոխները դէմ:

Այսպէս ուրեմն որչափ և զօրեղ լինի կա-
թոլիկութիւնը՝ ամէն տեղ զօրեղ հակառակորդ-
ներ ունի և սպառնալից ապագայի հանդէպ է
դնում: Հեաաքբքի է առանձնապէս նորա զրու-
թիւնը Հիւսիս Ամերիկայում: Այստեղ պարզ երե-
ւում է, թէ ինչպէս կաթոլիկ եկեղեցին այն
դէպքում, երբ բողոքականութեան հետ մրցման
մէջ է՝ գորանում է ներքուստ, բայց և թէ ինչ-
պէս միաժամանակ ինքնուրոյն ողի է մնուցա-
նում: որ վաղ կամ ուշ ընդհարում կարող է
յառաջ բերել վատիկանի հետ: Պասլը բանա-
զրեց այն ինքնուրոյն ուղղութիւնը, որ «ամերի-
կականութիւն» է կոչուում, բայց այդ առթիւ
Գիրքոնս կարդինալին ուղղած զրութեան մէջ՝
նա այնպիսի տեղ պատկեր է գծագրում, որ
իւրաքանչիւր ամերիկացի հողեւորական ևս ազատ
խզճով այդ ձեռն «ամերիկականութիւնը» կրանա-
գրէ: մինչդեռ իսկականը շարունակում է զար-
գանալ և յառաջադիմել: Բացի գօրանից, ամե-
րիկական կառավարութիւնը չզիւտ իւր քաղա-
քական և քաղաքակրթական նպատակներն իրա-
գործելու խնդրում որևէ է խոչընդոտի առաջ
կանգ առնել, և ինչպէս բուն երկրի, այնպէս և
նոր նուաճած նահանգները մէջ կաթ. եկեղեցուն
ու մի դիմում անել արամադրել է:

Մի խոսքով կաթոլիկութեան հոյակապ շէն-
քը խարխուլ տեղեր շատ ունի, բայց նորա ճար-
տար վարիչներն արթուն են և անդադար աշ-

խատում են՝ մի կողմից քաղաքական աշխարհի
մէջ յաջողութեան դիւք պահպանել, միւս կող-
մից կարգածի փոխարէն առաքելութեան ճանա-
պարհով նորանոր ժողովուրդներ նուաճել: Պասլի
ցանկութիւնը լիազարգութեան համաժողովի մէջ
եւրոպական պետութիւնների շարքում մասնակ-
ցութիւն ունենալ՝ անկասար մնաց, որովհե-
տև վերջիններն յարգեցին խաղաղական կառավա-
րութեան բողոքն այդ նկատմամբ: Բայց Անոն
ԺԳ. հիւանդութեանից ելնելուց յետոյ՝ առաջին
անգամ կարդինալների ակումբին արած հանդի-
սաւոր ընդունելութեան միջոցին յայտնել է, որ
ինքը հոգւով մասնակից է և խնդակից այդ դե-
ղեցիկ ձեռնարկութեան և ցանկանում է ի սրտէ,
որ յաջողի այդպիսով սկիզբ դնել արևմտահեղու-
թիւնների վերջացնելու և ազդերի մէջը յնական
գորութեամբ լուծելու գաղափարի իրագործման:
Բնականաբար ինչպէս միշտ, այնպէս և այժմ,
նա առանձին մեծ տեղ էր տալիս պատական
աթոռին այս լիազարգութեան գործի մէջ և
մասնացոյց անում այն դերը, որ իբր նա կա-
տարել է շարունակ պատմութեան ընթացքում՝
ընտելութեան դէմ դնելով և լիազարգութիւն
սկսելով:—Ինչ վերաբերում է վերջապէս հոռ-
միական եկեղեցուց առաքելական գործունէու-
թեան՝ նորա յաջողութիւնները աֆրիկական
գաղթավայրերում, Չինաստանում, ամբողջ ա-
րևելքում՝ ակներև են, բայց կյաջողի արգեօք
նորա այդ տեղերում կաթոլիկութեան համար
այնպիսի հաստատ արմատներ ձգել, որ ապա ինէ
նոցա, եթէ մի ժամանակ ռոմանական երկիրները
ձեռքից գնան, այդ ապագայի հարց է և խիտ
երկրայելի հարց:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՀԱԿԱԿՐՕՆԱԿԱՆ և ԴԱՄԱՆԱՓՈՒՄԱԿԱՆ
ՀԱՐԺՈՒԹԸ ՄԵՐ ՄԷ.Ճ.

Արդեօք շատնքն են, որոնք տեսնում
են, թէ ինչպէս ընկել է կրօնի նշանակու-
թիւնը մեր ժողովուրդի աշքում և որ սաւոր
աւելի է ընկնում: մտածո՞ւմ ենք արդեօք, թէ
նր է տանում մեզ այս և ի՞նչ ողբալի հե-